Պ. Ա. ՍՏՈԼԻՊԻՆԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԻՋԵՑՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ 1906-1910 թթ.*

Սաթենիկ Ավոյան

Բանալի բառեր՝ էջմիածին, կաթողիկոս, կոնդակ, եկեղեցի, փոխարքա, համագումար, կենտրոնական ժողով, ցարական կառավարություն:

Հայկական եկեղեցու ունեցվածքի բռնագավթումից հրաժարումը(1905թ.) ամենևին էլ չէր նշանակում, որ հայկական եկեղեցու նկատմամբ ցարական կառավարության վարած ռեպրեսիվ քաղաքականությունը կփոխարինվի հանդուրժողական քաղաքականությամբ: Պարզապես հաշվի առնելով կայսրությունում ծավալված հեղափոխական իրադրությունը՝ ցարական բարձրաստիճան չինովնիկներն ստիպված էին հրաժարվելու բացահայտ առճակատումից և գործելու ավելի զգույշ և կշռադատված:

Ոգևորված 1905թ. հոկտեմբերի 17-ի բարձրագույն Մանիֆեստից, որով հռչակվում էր անձի անձեռնմխելիություն, խոսքի, խղճի, հավաքների ազատություն, Ամենայն հայոց կաթողիկոս Մ. Խրիմյանը (1893-1907թթ.) 1906թ. մայիսի 10-ին ստորագրում է կոնդակ, որում խոսվում էր օգոստոսի 15-ին Կենտրոնական ժողովի հրավիրման մասին: Այն պետք է քննարկեր և կարգավորեր անհետաձգելի հարցեր՝ կապված ուսումնական հաստատությունների, եկեղեցական և վանքային կալվածքների և թեմական ժողովների հետ:

1906թ. էջմիածնում հրավիրվելիք Կենտրոնական ժողովը մեծ ոգևորություն էր առաջացրել ժողովրդի շրջանում: Սակայն Կովկասի փոխարքա Ի. Ի. Վորոնցով-Դաշկովի(1905-1916թթ.) կարծիքով, Կենտրոնական ժողովի հրավիրման մասին կոնդակի հրապարակումը կաթողիկոսը իրականացրել էր «Դաշնակցություն» կուսակցության ճնշման ներքո՝ օգտագործելով էջմիածնի Սինոդի որոշ անդամների ազդեցությունը: Չնայած այս ամենին՝ Կովկասում «ժողովրդավարություն» հռչակած փոխարքան, հաշվի առնելով երկրում քաղաքական փոփոխությունները, մասնավորապես կրոնահանդուրժողականության և քաղաքացիների ազատության ակտը, ստիպված էր սպասողական դիրք ընդունելու: Մանավանդ որ կաթողիկոսի կողմից վերջինս տեղեկացվել էր Կենտրոնական ժողովի հրավիրումից տաս օր առաջ [1]: Այս հանգամանքը փաստորեն նշանակում էր, որ Մ. Խրիմյանը ձգտում էր թույլ չտալու Ի.Ի.Վորոնցով-Դաշկովի միջամտությունը՝ Կենտրոնական ժողովի հրավիրման մասին ընդունված որոշման գործընթացին:

Ի. Ի. Վորոնցով-Դաշկովը լավ էր հասկանում, որ համագումարի արգելումը հայ հասարակության ծայրահեղ տարրերի համար զանգվածների շրջանում ագիտացիայի առիթ կստեղծեր, թե իբր ճնշվում է հոգևոր իշխանության ազատությունը, ուստի նա նպատակահարմար գտավ «չմիջամտել կաթողիկոսի կարգադրությանը մինչև այն ժամանակ, քանի դեռ համագումարը դուրս չի գա իր նախանշված սահմաններից»[2]:

Կենտրոնական ժողովն իր աշխատանքներն սկսեց 1906թ. օգոստոսի 15-ին: Բացման հանդիսավոր խոսքով հանդես եկավ Մկրտիչ Խրիմյանը և ընդգծեց ժողովի իրա-

---

* Հոդվածն ընդունվել է 19.01.2016:
Հոդվածը տպագրության է երաշխավորել պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Վ. Գ. Թունյան

վասության շրջանակները. լուծում տալ դպրոցական և եկեղեցական հաստատություններին առնչվող սկզբունքային մի շարք խնդիրներին: Իր ծեռքը վերցնելով ժողովի ղեկավարությունը՝ Դաշնակցությունը ցանկացավ եկեղեցական և դպրոցական գործերը կարգավորելու համար հրավիրված ժողովին տալ նախապառլամենտի տեսք: Ակնհայտ էր, որ 1905թ. հեղափոխության շոշափումները հասել էին նաև Հայաստան: Պատգամավորները օգոստոսի 20-ին ընդունեցին որոշում. «Համագումարը, որպես օրինական ընտրված ժողովրդական ներկայացուցչություն, գտնում է, որ պետք է դիտարկի և լուծի հասարակական կյանքի բոլոր հարցերը՝ կապված վարչական, դպրոցական, տնտեսական, սոցիալական բնագավառների հետ: Համագումարի պատվիրակները իրենց իրավունք են վերապահում արտահայտվելու ողջ Ռուսաստանին և հատկապես հարազատ Կովկասին այրող հարցերի շուրջ»[3]:

Էջմիածնում ընթացող իրադարձությունների մասին տեղեկությունները Ի.Ի.Վորոնցով-Դաշկովին թույլ տվեցին եզրակացնել, որ կաթողիկոսի հրավիրած համագումարը սոցիալ-հեղափոխականների ոչ մեծ խմբի ծեռքի գործն է, որոնք ամբողջովին տիրել են ծեր և հիվանդ կաթողիկոսին[4]: Խուսափելով իրադարձությունների հետագա բարդությունից՝ Ի.Վորոնցով-Դաշկովը որոշում է փակել համագումարը: Օգոստոսի 30-ին նահանգապետի հրամանով ոստիկանությունը ցրեց այն:

Էջմիածնում ծավալված իրադարձությունների մասին Կովկասի փոխարքան հեռագրով տեղեկացնում է ներքին գործերի նախարար՝ Պ.Ա.Ստոլիպինին: Ներկայացնելով համագումարի անցկացման թույլտվության պատճառները՝ նա պարզաբանում է, որ համագումարի արգելումը անհարմար էր, քանի որ պաշտոնապես այն նվիրված էր եկեղեցական հարցերին և արգելքը վատ տպավորություն կթողներ, մանավանդ որ միևնույն ժամանակ թույլատրվել էր համամահմեդական համագումարը Նիժնի Նովգորոդում: Սակայն տեսնելով, որ պատվիրակների մեծամասնությունը նպատակ էր դրել հասնելու պետությունից եկեղեցու անջատմանը[5] և քննարկելու հարցեր՝ կապված ռուսական ազատագրական շարժումների հետ՝ նահանգապետին կարգադրվել էր փակել այն:

Իր հերթին Պ. Ստոլիպինը 1906թ. սեպտեմբերի 8-ին ցար Նիկոլայ II-ին է ներկայացնում «Էջմիածնում Ամենայն հայոց կաթողիկոսի հրավիրած համագումարի մասին» հաշվետվությունը, որում հանգամանորեն շարադրում է Էջմիածնում տեղի ունեցածը և ընդգծում, որ հրավիրված համագումարը, դուրս գալով իրեն վերապահված իրավասությունների սահմանից, թույլ է տվել իրեն քննարկել մի շարք հարցեր, որոնք վերաբերում են ողջ Ռուսաստանին: Ձեկույցին ծանոթանալուց հետո կայսրը հրահանգում է Կովկասի փոխարքայի միջոցով, կաթողիկոսին բացատրել Կովկասում նրա գործողությունների ամբողջովին սխալ լինելը[6]: Միապետի կարգադրությունը Ի.Ի.Վորոնցով-Դաշկովը փոխանցում է հայոց կաթողիկոսին:

Կենտրոնական ժողովի հակապետական գործունեության փորձը չէր կարող չանհանգստացնել Պ. Ա. Ստոլիպինին: Վերջինս այդ ամենի գլխավոր մեղավոր էր համարում ծեր կաթողիկոսին, որն արդեն ի զորու չէր վերահսկելու իրավիճակը և ամբողջովին տրվել էր հեղափոխական ուժերի ազդեցությանը: Այդ կապակցությամբ, 1906թ. դեկտեմբերին, իր մտահոգությունները Պ.Ստոլիպինը հայտնում է Ի.Վորոնցով-Դաշկովին հղած նամակում. «... կաթողիկոս Մկրտիչը, ըստ երևույթին, ընկել է իրեն շրջապատող հայ հեղափոխական կուսակցությունների ճնշման տակ... Էջմիածնի ակադեմիան վաղուց վերածվել է քարոզչության բեմահարթակի: Այս հանգամանքները ակնհայտորեն վկայում են կաթողիկոս Մկրտիչի՝ ներկայումս իր զբաղեցրած պաշտոնին անհամապատասխան լինելը, ուստի անհրաժեշտ եմ համարում միջոցներ ծեռնարկել ողջ ե-

կեղեցու հոգևոր հարցերի կառավարումը կարգավարելու համար... կարծում եմ, որ առաջին պարտականությունը պետք է լինի Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչին առաջարկել հանգստի գնալ սեփական ցանկությամբ՝ նկատի ունենալով նրա վատառողջ վիճակը և ծերությունը: Հայ-լուսավորչական գործերի կառավարումը, մինչև կաթողիկոսի մահը, վստահել էջմիածնի Սինոդին, իսկ այդ ընթացքում մշակել և օրենսդրական հաստատմանը ներկայացնել նոր կանոնադրություն հայ-լուսավորչական եկեղեցու վերաբերյալ, առանց նրա կողմից յուրացրած ինքնուրույնության, որին նա տիրապետում է ներկայումս՝ ի վնաս պետական շահերի»[7]:

Պ.Ա.Ստոլիպինի նամակի պատասխանը չուշացավ: 1906թ. դեկտեմբերի 24-ին Ի.Վորոնցով-Դաշկովը հայտնեց իր կարծիքը, որ ներկայումս նպատակահարմար չի գտնում խոսել Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչին հանգստի ուղարկելու և հայ-լուսավորչական եկեղեցու գործերի ղեկավարումը էջմիածնի Սինոդին վստահելու հարցի մասին[8]: Սակայն մտահոգված կաթողիկոսի առողջական վիճակով՝ փոխարքան Պ.Ստոլիպինին առաջարկեց՝ հայկական եկեղեցու առաջնորդի ընտրության կարգը փոխել այնպես, որ երկու ավագ թեկնածուների քվեարկությունը իրականացվի ոչ թե բաց, այլ գաղտնի: Ի.Ի.Վորոնցով-Դաշկովի կարծիքով՝ գաղտնի քվեարկությունը իշխանությանը հնարավորություն կտար միջամտելու կաթողիկոսի ընտրությանը[9]:

1907թ. սեպտեմբերի սկզբին Մ.Խրիմյանի առողջական վիճակը կտրուկ վատացավ, իսկ հոկտեմբերի վերջին դարձավ ճգնաժամային: Հոկտեմբերի 29-ի առավոտյան ութսունյոթ տարեկան հասակում Խրիմյան Հայրիկը կնքեց իր մահկանացուն: Կաթողիկոսի մահից հետո ներքին գործերի նախարար Պ.Ա.Ստոլիպինը, որը միարժամանակ Նախարարների Խորհրդի նախագահն էր, անհրաժեշտ գտավ պատրաստելու հայկական եկեղեցու կառավարման կարգավիճակի փոփոխությունը: Նրա կողմից ևս - մեկ փորձ կատարվեց կաթողիկոսի իրավունքները կրճատելու և նրա ընտրության գործընթացում իշխանության միջամտությունը ընդլայնելու ուղղությամբ: 1907թ. դեկտեմբերին Ի.Ի.Վորոնցով-Դաշկովին և արտաքին գործերի նախարար Ա.Պ.Իզվոլսկիին(1906-1910թթ.) ուղղված ուղերձում Պ. Ստոլիպինը բարձրացրեց նոր օրենսդրության ընդունման հարցը, որը կսահմաներ կաթողիկոսի իրավունքները: Պ.Ա.Ստոլիպինը պաշտպանում էր Կովկասի նախկին կառավարիչ Գ. Գոլիցինի՝ կաթողիկոսին սովորական հոգևոր ղեկավարի աստիճանի իջեցնելու տեսակետը[10]: Կաթողիկոսի «Ամենայն» նշանակության չընդունումը կզրկեր նրան արտոնյալ դիրքից և կառավարությանը թույլ կտար նրան վերաբերվելու որպես սովորական հպատակի:

Սակայն, կաթողիկոսի կարգավիճակի հարցում Պ.Ա.Ստոլիպինի մոտեցումը հանդիպեց լուրջ դիմադրության: Կաթողիկոսի ամենամեծ պաշտպանի դիրքում կրկին հանդես եկավ Ի.Վորոնցով-Դաշկովը: Նա պնդում էր, որ ընդվզումները ինքնակալության քաղաքականության նկատմամբ թուլացել էին այն բանից հետո, երբ էջմիածնին վերադարձվեց եկեղեցու ունեցվածքը և դպրոցը: Հայ հասարակության և մասնավորապես հայ հոգևորականության ազգային և կրոնական զգացմունքները նոր- նոր էր սկսվել հանդարտվել: Փոխարքան կարծում էր, որ ներկա պահին պետք է հայերին համոզել նրանում, որ նրանք նախ և առաջ Ռուսաստանի քաղաքացիներ են, և ոչ թե կրկին նրանցից թշնամիների ստեղծել: Վորոնցով-Դաշկովն ընդունում էր, որ, ի տարբերություն մյուս քրիստոնյա դավանանքի առաջնորդների, կաթողիկոսը կայսեր կողմից ստանում էր ճանաչման հատուկ տեսք և համոզված էր, որ ժամանակին օրինաստեղծների կողմից դա գիտակցաբար է արվել, քանզի կաթողիկոսը մի ամբողջ առանձին եկեղեցու առաջնորդ էր այն դեպքում, երբ Ռուսաստանում այլ քրիստոնյա դավանանքի բարձրաստիճանները, այդ թվում և ուղղափառ, միայն առանձին թեմերի ղեկա-

վարներ էին: Փոխարքան նշում էր այն խոր իմաստությունը, որն ընկած էր Ամենայն Հայոց կաթողիկոսի ճանաչման օրենքի հիմքում և պնդում էր նրա կարևորությունը՝ Անդրկովկասում և Մերձավոր Արևելքում ռուսական շահերի պաշտպանության համար[11]: Ավելին, անդրադառնալով կաթողիկոսի դերի նվազեցման (որպես միայն ռուսահպատակ հայերի առաջնորդի) առաջարկին, փոխարքան վստահ ընդգծեց, որ դա «միայն կպղտորի հայերի մտքերը, սակայն նպատակին չի հասնի...Կամ էջմիածնի կաթողիկոսը կենթարկվի այդ պահանջին, բայց այդ ժամանակ ինչ-որ մի տեղ, ասենք Թուրքիայում, կընտրեն Ամենայն հայոց կաթողիկոսի, և էջմիածնի հայոց պատրիարքը կենթարկվի նրան, կամ էջմիածնի կաթողիկոսը կանտեսի օրենքը և կմնա բոլոր հայերի առաջնորդը»[12]: Պ. Ստոլիպինի մոտեցումը փոխարքան գնահատեց որպես վերադարձ հին կուրսի:

Ի.Ի.Վորոնցով-Դաշկովի դիրքորոշումը ստիպեց Պ. Ա. Ստոլիպինին հանելու կաթողիկոսի «Ամենայն» նշանակության զրկման մասին պահանջը և անձեռնմխելի թողնելու նրա անձնական իրավունքը: Սակայն ներքին գործերի նախարարը պնդեց կաթողիկոսի ռուսաց լեզվի տիրապետման, կաթողիկոսի ընտրության ժամանակ ռուսաստանյան և օտարերկրյա հայերի ձայների հավասարակշռության պահպանման, կաթողիկոսական աթոռին միայն ռուսահպատակի հաստատելու անհրաժեշտությունը: Պ. Ստոլիպինի առաջարկների քննարկման ժամանակ Կովկասի փոխարքան կրկին դեմ արտահայտվեց կաթողիկոսի իրավունքների փոփոխմանը: Անդրադառնալով կաթողիկոսից ռուսաց լեզվի իմացության պահանջին՝ Ի. Վորոնցով-Դաշկովը նշեց, որ այդ պահանջի իրականացումը կնշանակեր ընտրություններից օտարերկրյա հայ թեկնածուների մեկուսացում, ինչը կհարվածեր Ռուսաստանի արտաքին շահերին: Կաթողիկոսի անձը՝ թուրքահպատակ կամ ռուսահպատակ, կարևոր չհամարվեց: Փոխարքան Մ. Խրիմյանի ընդդիմությունը ցարիզմին չէր բացատրում նրանով, որ նա արևմտահայության ներկայացուցիչ էր, այլ նրանով, որ հայկական եկեղեցու ղեկավարն էր: «Եթե Խրիմյանը հակադրվել է կառավարության որոշ գործողություններին, ինչպես օրինակ եկեղեցու ունեցվածքի բռնազավթմանը, ապա վստահություն չկա, որ, լինելով ռուսահպատակ, նա կգործեր այլ կերպ: Պատմությունը ցույց է տալիս, որ եկեղեցական ունեցվածքի բռնազավթման դեպքում կատաղի հակառակորդները եղել են ռուսահպատակները»[13]: Կովկասի փոխարքայի պատասխանը բխում էր տարածաշրջանի կոնկրետ իրավիճակի, ինչպես նաև հայկական եկեղեցու դրության և հայ հասարակության վիճակի իմացությունից:

1908թ. մարտի 24-ին Պ.Ստոլիպինին իր եզրակացությունը ներկայացրեց նաև արտաքին գործերի նախարար Ա. Պ. Իզվոլսկին: Վերջինս նույպես հանդես եկավ ներքին գործերի նախարարի վառ առաջարկների՝ հատկապես կաթողիկոսի «Ամենայն» նշանակությունը մերժելու կետի դեմ: Ա.Իզվոլսկին շեշտում էր, որ այն ամրագրված է հայկական կանոններում: Եվ անգամ եթե 1836թ. Կանոնադրությունը ինչ-որ չափով արհեստականորեն ամրապնդել է այդ նշանակությունը, ապա չկա որևէ հիմք ենթադրելու, որ որոշ հոդվածների փոփոխման հետ այդ նշանակությունը կկորչի: Ա.Պ.Իզվոլսկին պնդեց կաթողիկոսի կարևորության պահպանումը Ռուսաստանի արտաքին քաղաքականության համար՝ ընդգծելով կառավարության ջանքերը Ղրիմի պատերազմից հետո, որոնք ուղղված էին թուրքահայերին՝ էջմիածնի հոգևոր կենտրոնին ենթարկելուն: Նախարարն ընդգծեց, որ անհրաժեշտ է այնպես անել, որ «հայկական ցեղին պատկանող՝ Թուրքիայի հարևան պրովինցիաների զգալի մասը թշնամաբար չտրամադրվի Ռուսաստանի նկատմամբ, այլ դաստիարակվի այն գիտակցությամբ, որ միայն Ռուսաստանին է նա պարտական՝ հայ ցեղի թանկագին իդեալների պահպանման համար: Եվ եթե հայ ժողովրդի միավորումը ընդհանրապես հնարավոր է, ապա միայն Ռուսաս-

տանի իշխանության տակ հայերի անցման պայմանով: Ռուսաստանի իշխանության ներքո այդ միավորման խորհրդանիշը էջմիածնի պատրիարքությունն է»[14]: Ա.Պ.Իզվոլսկին հանդես եկավ բարեփոխումների անցկացման մեջ ծայրահեղ զգույշ լինելու օգտին, որոնք հայերի շրջանում կասկածներ չէին հարուցի, որ կառավարությունը նորից կգնա իրենց եկեղեցու հետապնդման ուղիով: Արտաքին գործերի նախարարի այս մոտեցումը բացառապես պայմանավորված էր Ռուսաստանի արտաքին քաղաքականության շահերով:

Սակայն Պ.Ստոլիպինը, ինչպես ժամանակին Գ. Գոլիցինը, անդրդվելի էր: Չփոխելով էջմիածնի Աթոռին առաջադրված թեկնածուի ռուսերենի իմացության անհրաժեշտության մասին իր կարծիքը՝ Պ. Ստոլիպինը առաջարկեց հարցը քննարկել Նախարարների խորհրդում: Այստեղ հարցի քննարկման ժամանակ կրկին տարաձայնություններ հնչեցին: Օտար դավանությունների դեպարտամենտի ղեկավար Վսևոլոդ Վլադիմիրովը (1905-1908թթ.) հայտարարեց, որ հայկական եկեղեցու կազմալուծումը հասել է ծայրահեղ վիճակի: Նա կարծում էր, որ նոր ընտրությունները իշխանություններին հնարավորություն են ընձեռնել վերանայելու եթե ոչ 1836թ. Կանոնադրությունը, ապա գոնե կաթողիկոսի կարգավիճակը: Կաթողիկոսի «Ամենայն» նշանակության ընդունումը, Վ.Վլադիմիրովի կարծիքով, որևէ օգուտ չէր բերում, քանի որ նրա նշանակությունը ավելի մեծ էր Ռուսաստանի հայերի, քան օտարերկրյա իր հավատացիյալների շրջանում: Հետևաբար Վ. Վլադիմիրովը առաջարկում էր կաթողիկոսի կարգավիճակում հաստատել միայն Ռուսաստանի քաղաքացիներին, որոնք տիրապետում էին ռուսաց լեզվին: Լիովին համակարծիք լինելով Պ.Ա.Ստոլիպինի հետ՝ որպես վերջնական արդյունք Վ.Վլադիմիրովը առաջարկում էր երեք հիմնական փոփոխություն. էջմիածնի աթոռի թեկնածուն պետք է տիրապետեր ռուսաց լեզվին, կաթողիկոսի ընտրության ժամանակ ռուսական և օտարերկրյա հայերի ձայների քանակը պետք է լիներ հավասար, կաթողիկոսի հարաբերությունները Սինոդի հետ պետք է հստակեցվեին[15]:

Հերթական անգամ, սակայն, այս առաջարկներին դեմ արտահայտվեց փոխարքան և արտաքին գործերի նախարար Ա.Իզվոլսկին: Նրանք երկուսն էլ ընդգծեցին, որ կաթողիկոսի թեկնածուից ռուսաց լեզվի իմացության պահանջը կնշանակեր ընտրությունից հեռացնել օտարերկրյա թեկնածուներին: Ստիպված լինելով քվեարկելու ոչ թե լավագույն, այլ ռուսալեզու թեկնածուի օգտին՝ օտարերկրյա հայերը դժվար թե ընտրություններն օրինական համարեին: Ի.Ի.Վորոնցով-Դաշկովը և Ա.Պ.Իզվոլսկին նաև սխալ համարեցին ծեր կաթողիկոսի մահից անմիջապես հետո ընտրական համակարգում որևէ փոփոխությունը: Փոխարքան կողմ էր հայկական եկեղեցու կառավարման մեջ միայն մեկ փոփոխություն մտցնելուն, այն է՝ փակ քվեարկությունը, որը կպաշտպաներ պատվիրակներին ծայրահեղ կուսակցությունների և ահաբեկչության ազդեցությունից:

1908թ. օգոստոսի 26-ին լսելով այս փաստարկները՝ Նախարարների խորհուրդն անհրաժեշտ գտավ հաշվի առնելու ներքին և արտաքին քաղաքականության պահանջները և որոշեց հետաձգել հարցի լուծումը, իսկ նոր օրենքի նախագծով հանդես գալ ավելի խաղաղ ժամանակ՝ ընտրված կաթողիկոսի մասնակցությամբ, որի ընտրությունները նշանակվել էին 1908թ. հոկտեմբերի 30-ին: Փակ քվեարկության արդյունքում ձայների մեծամասնությամբ կաթողիկոս ընտրվեց Մաթևոս Իզմիրլյանը (1908-1910թթ.) [16]:

Պ.Ա.Ստոլիպինը, Նախարարների խորհրդում ցանկալի արդյունքի չհասնելով, փորձեց որոշ փոփոխություններ մտցնել կաթողիկոսի հաստատման գործընթացում: Կայսրին ուղղված զեկույցում Պ. Ստոլիպինը այս անգամ հանդես եկավ նորընտիր կաթողիկոսին շնորհվող պարգևների դեմ: Հայկական եկեղեցու առաջնորդին հաստատելու ժամանակ ցարը նրան շնորհում էր պատվոգիր, ալմաստյա խաչով թիկնոց, սուրբ

Ա.Նևսկու անվան շքանշան և դրամական միջոցներ (հինգ հազար ռուբլի): Նման վերաբերմունքը Պ.Ստոլիպինը չափից շատ էր համարում, քանի որ, կաթողիկոսները իբր թշնամաբար էին վերաբերվում Ռուսաստանին: Այդ պարգևների փոխարեն Ներքին գործերի նախարարը առաջարկում էր սահմանափակվել կաթողիկոսին՝ պետական մեծ կնիքով բարձրագույն պատվոգրի շնորհումով: Նա նաև պնդում էր, որ Մաթևոսը միանգամից գա Պետերբուրգ (Թիֆլիսի փոխարեն, որը սովորաբար արվում էր) կայսրի հետ անձամբ հանդիպելու համար, որի ժամանակ նրան կբացատրեին կայսերական օրենքներին հետևելու անհրաժեշտությունը և ոչ թե միայն եկեղեցական կանոններին: Պ.Ստոլիպինի այս առաջարկը ընդունվեց մասամբ: Կովկասի փոխարքայի միջոցով Մ.Իզմիրլյանին հայտնեցին 1909թ. մայիսի կեսերին Պետերբուրգ այցելելու անհրաժեշտության մասին:

1909թ. մայիսի 27-ին Մ.Իզմիրլյանն արդեն Պետերբուրգում էր: Մայիսի 29-ին ցարական պալատում կայացավ Իզմիրլյանի ընդունելությունը, որի ժամանակ Նիկոլայ II-ը Մ.Իզմիրլյանին հավաստիացրեց պետության բոլոր հպատակների հանդեպ իր միանման վերաբերմունքի և հայ ժողովրդի նկատմամբ բարի տրամադրվածության մասին: Սակայն ընդգծեց, որ հայերն իրենց հերթին պետք է հետևեն օրենքին: Ցարը համոզմունք հայտնեց, որ դրա համար նոր կաթողիկոսը ջանքեր չի խնայի, իր հոտին կտանի խաղաղ բարեգործ կյանքի և հնազանդությանը բարձրագույն օրենքին: Ցարին այցելելուց և Ռուսաստանին ու ցարին հավատարմություն հայտնելուց հետո միայն կաթողիկոսին թույլատրվեց երդում ընդունել: 1909թ. հունիսի 6-ին Նիկոլայ II-ը Կովկասի փոխարքային հայտնեց կաթողիկոսի ընդունելության առիթով իր դրական տպավորության մասին: Հունիսի 23-ին հայոց կաթողիկոսը վերադարձավ Էջմիածին:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Воронцов-Дашков И.И., Всеподданнейшая записка по управлениию Кавказским краемь, Тифлис, 1907, стр.14.
2. ՀԱԱ, ֆ. 95, ց. 1, գ. 6, թ. 3148:
3. Тунян В.Г., Последний период патриаршества Хримяна 1904-1907гг., Ер., 2003, стр.241.
4. ՀԱԱ, ֆ. 95, ց. 1, գ. 7, թ. 1715:
5. Дякин В.С., Национальный вопрос во внутренней политике царизма (XIX-началоXX вв), СПБ, 1988, стр. 722.
6. РГИА, ф. 821, оп.7, д. 294, л. 35-36 об.
7. РГИА, ф. 1276, оп.19, д.70, л. 40-43 об.
8. РГИА, ф. 1276, оп.19, д. 274, л. 44-46.
9. Тунян В.Г., Патриаршество Хримяна Айрик 1893-1907гг., Ер., 2013, стр. 696.
10. Верт Пол, Православие, инославие, иноверие: очерки по истории религиозного разнообразия Российской империи, М., 2012, стр. 196.
11. Там же, стр. 197:
12. Кумпан Е.Н., Проблема религиозного самоопределения на Кавказе в начале XX в “Парадигмы и оценки кавказской политики России в прошлом и настоящем”, КубГУ, Краснодар, 2013, стр. 149.
13. Тунян В.Г., Правление католикоса М. Измирляна 1908 - 1910 гг, Ер., 2004, стр. 7.
14. Там же, стр. 10:
15. РГИА, ф. 821, оп. 7, д. 306, л.30.
16. Выборы католикоса.- Русское слово, 1908 г., 15 ноября.

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Պ. Ա. Ստոլիպինի առաջարկները Ամենայն Հայոց կաթողիկոսի կարգավիճակի իջեցման հարցի շուրջ 1906-1910 թթ.

Սաթենիկ Ավոյան

1906-1910 թվականների ընթացքում ցարական կառավարությունը շարունակում էր ուշադրությամբ հետևել էջմիածնի յուրաքանչյուր քայլին և վերջինիս ներքին գործերին միջամտելու առիթը երբեք բաց չէր թողնում: Դրա անմիջական արդյունքը եղավ կաթողիկոսի հրավիրած Կենտրոնական ժողովի ցրումը, որն անցել էր նախապես իր նախանշած հարցերի սահմանը: Իսկ Մ.Խրիմյանի մահից հետո Պ.Ա.Ստոլիպինը ժամանակը պատեհ համարեց, նախքան նոր կաթողիկոսական ընտրությունները, կաթողիկոսի կարգավիճակը հստակեցնելու և նրա իրավունքները սահմանափակելու համար: Սակայն, արքունիքի առավել ճկուն դիվանագետները՝ ի դեմս Ի.Ի.Վորոնցով-Դաշկովի և Ա.Պ.Իզվոլսկու, անժամանակ համարեցին Պ.Ստոլիպինի մոտեցումները: Հանդիպելով վերջիններիս սուր քննադատությանը՝ Պ.Ա.Ստոլիպինի բոլոր փորձերը ձախողվեցին:

РЕЗЮМЕ

Предложения П. А. Столыпина о снижении статуса католикоса всех армян в 1906 –1910 гг.

Сатеник Авоян

Ключевые слова: *Эчмиадзин, католикос, кондак, церковь, наместник, центральное собрание, царское правительство.*

В период 1906-1910 гг. царское правительство продолжало внимательно следить за каждым движением Эчмиадзина и не потеряла возможность вмешаться в его внутренние дела. Результатом стал разгон Центрального собрания, созванного католикосом. А после смерти М. Хримяна, П. А. Столыпин считал уместным до избрания нового Патриарха, уточнить статус католикоса и ограничить его права. Но более гибкие дипломаты страны, в лице И. И. Воронцова-Дашкова и А. П. Извольского сочли предложения П. А.Столыпина несвоевременными. Встретив резкую критику последних, все попытки П. А. Столыпина провалились.

SUMMARY

P.A. Stolypin's Proposals on the Issue of Reducing the Status of Armenian Catholicos in 1906– 1910

Satenik Avoyan

Keywords: *Etchmiadzin, Catholicos, encyclical, church, viceroy, congress, central Assembly, Tsarist government.*

The tsarist government continued to closely follow every step of Etchmiadzin in 1906-1910 and would not hold the opportunity to intervene with its internal affairs. Its direct result was the dissolution of the Central conference held by Catholicos. After M. Khrimyan's death P. A. Stolypin considered that it was the good time to clarify the status and limit the rights of Catholicos before the election of the new Patriarch. However, the more flexible diplomats of the Court, such as I.I.Vorontsov-Dashkov and A.P. Izolvski deemed Stolypin's proposals untimely. Facing their sharp criticism P. A. Stolypin's all attempts failed.